ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-8-7-Ա

ք. Երևան 20.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2017 թվականի դեկտեմբերի 15-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Apple Inc. (1 Infinite Loop Cupertino CA 95014) ընկերության «IPAD PRO SMART KEYBOARD» (IR1294575) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ, 94-րդ կետի 3-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն, բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որը առևտրում ծառայում է ապրանքի տեսակը և այլ բնութագրեր նշելու համար և իրենից ներկայացնում է նկարագրական նշան: Տվյալ դեպքում «SMART KEYBOARD» ապրանքային նշանը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «խելացի ստեղնաշար» չի կարող գրանցվել, քանի որ այն չունի տարբերակիչ հատկություն և նկարագրական բնույթի նշան է: «SMART KEYBOARD»՝ թարգմանաբար «խելացի ստեղնաշար» արտահայտությունը պետք է հասանելի լինի համապատասխան դաշտում գտնվող այլ արտադրողների համար, ուստի այն չի կարող գրանցվել որևէ սուբյեկտի անունով: Բացի այդ, համացանցից ստացված տեղեկությունները նույնպես վկայում են, որ սմարթ ստեղնաշարը համատեղում է առաջատար տեխնոլոգիաները՝ առաջին հայացքից այն սովորական ստեղնաշար է, լիովին շարժական է, միացվում է խելացի միակցիչի միջոցով, որն էլ օգտագործվում է

տարբեր սուբյեկտների կողմից և աշխատում է տարբեր ծրագրերի հետ (http://www.futurity.org/keyboard-plasti-security-844322, https://www.acs.org/content/acs/en/pressroom/presspacs/2015/acs-presspac-january-21-2015/sart-keyboard-cleans-and-powers-itself-and-can-tell-who-you-are.html, http://www.alwaysinnovating.com/products/keyboard.htm, https://www.stigviewer.com/stig/keyboard_video_and_mouse_switch/2014-08-04/finding/V-6678):

Կոլեգիայի նախագահը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ բողոքարկողը ներկայացրել է հայտարարություն հայտարկված նշանում «SMART KEYBOARD» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելու վերաբերյալ:

Բողոքարկողի ներկայացուցիչը նիստին ներկա չէր:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «IPAD PRO SMART KEYBOARD» (IR1294575) ապրանքային նշանի վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ